# Մոդուլային օրիգամի «Ձկնիկ»



Ձկնիկ մոդուլային օրիգամին բաղկացած է 159 եռանկյուն մոդուլներից՝ 2 կարմիր, 9 կապույտ, 31 նարնջագույն, 47 սև և 70 դեղին: Ձկնիկը բավական վառ ու գունավոր երանգավորում ունի: Գույների բազմազանությունը կարող եք ընտրել ինքներդ:

1. Վերցնենք 2 կարմիր մոդուլ (ձկնիկի բերանը) և դրանց վրա հագցնենք 3 դեղին մոդուլ այնպես, որ 2 ծայրերի մոդուլները մեջտեղում ունենան դատարկ գրպանիկ.





2. Հաջորդ շարքում ավելացնենք ևս մեկ դեղին մոդուլ.



3. 4-րդ շարքում 5 մոդուլ կա՝ մեջտեղում 1 սև մոդուլ (ծկնիկի աչքը)



4. Ճկնիկի գլուխն ավարտվում է հաջորդ շարքում՝ 6 դեղին մոդուլներով։



5. Ճկնիկի մարմինը սկսում ենք պատրաստել 2 շարքով, որոնց համար կօգտագործվեն 7 և 8 սև մոդուլներ.





6. Այժմ 2 շարք դեղին գույնի մոդուլներ ենք ավելացնում՝ համապատասխանաբար 9 և 10 մոդուլ։





7. Կրկնում ենք սև գիծը 2 շարքով՝ 11 և 12 սև մոդուլներով։





8. Ապա կրկին դեղին շերտը 2 շարքով՝ 13 և 14 դեղին մոդուլներով։





9. Հաջորդ շարքում ծայրերում ավելացնում ենք 2-ական դեղին մոդուլ և կենտրոնում՝ 3 մոդուլ



10. Սկսում ենք հավաքել ճկնիկի պոչը: Վերցնենք 4 սև մոդուլ և ամրացնենք վերջին շարքում կենտրոնում ավելացված 3 դեղին մոդուլներին:



11. Այնուհետ հետևյալ հաջորդականությամբ ավելացնում ենք՝ 5 կապույտ, 6 նարնջագույն և 7 նարնջագույն մոդուլներ







12. Հաջորդ շարքում պոչի ծայրերում ավելացնում ենք 1 նարնջագույն մոդուլ, ապա հաջորդ շարքում ևս 1-ական նարնջագույն մոդուլ: Պոչը պատրաստ է:





13. Այժմ հերթը վերին լողակինն է։ Դրա համար ծայրում ավելացված դեղին 2 մոդուլների վրա հետևյալ հերթականությամբ ավելացնում ենք 2 սև, 2 կապույտ, 3 շարք 2 նարնջագույն և վերջում 1 նարնջագույն մոդուլներ։ Լողակը պատրաստ է։ Նման ձևով հավաքվում է նաև ներքևի լողակը.





Ձկնիկը պատրաստ է.



